

ԶԱՐԹՈՆԿ -ը կարելի է կարդալ նաեւ համա-
ցանցի վրայ հետեւեալ հասցեով՝
www.zartonkdaily.com
հնչաբե նաեւ ձեր անհատական թղթակցու-
թիւններն ու ծանուցումները կրնաք փոխան-
ցել խմբագրութեան հետեւեալ հասցէներուն՝
e-mail: zartonkadl@gmail.com
zartonkdaily@yahoo.com
P.O.Box: 11-617 & 175-348 Beirut-Lebanon
Tel./Fax: +961 1 444225

ԶԱՐԹՈՆԿ

Օրաթերթ

ZARTONK JOURNAL POLITIQUE ARMENIEN
77րդ Տարի, թիւ 170 (21,129) ՀՈՐԵՔԱԲԹԻ, 13 ՕԳՈՍՏՈՍ 2014 4 էջ 1000 L.N.

**ԱՇԵՐԻԱԿԱՆ ԱՐՄԱՎԱՐՈՒԹԻՒՆ
ՍՊԻՏԱԿ ՏԱՆ ԱՈՋԵՒ**
Ամերիկացի ազդեցիկները անցնող շա-
բաթվա ընթացքին Սպիտակ Տան առջեւ ցոյց մը կա-
տարած են Հայաստանի դէմ բողոքելու համար,
Հայաստան-Ազդեցիկ սահմանին վրայ պա-
տահած վերջին բախումներուն կապակցութեամբ:
Մտաւորապէս 40 ցուցարարներ Ազդեցի-
կական դոշակներ բարձրացուցած են եւ կրած
են պատահաբար, որոնք վրայ գրուած է. «Ղարա-
բաղը մերն է, մերը պիտի ըլլայ», «Կամ Ղարա-
բաղ, կամ մահ»: Անոնք նաեւ ունեցած են ար-
տայայտութիւններ Հայաստանի նախագահ
Սերժ Սարգսեանի դէմ:


ՆՈՐ ՆԱԽԱԳԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԹՈՒՎԿԱՆԸ 2 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Լիբանանեան խորհրդարանը տասերորդ անգամ ըլլալով ծախսերու ընտրելու երկրին նախագահը: Նախքան նիստը երեսփոխան ժան Օղասապեան յայտնեց, թէ նիստը պիտի ունեւար իր նախորդներուն ճակատագիրը, որովհետեւ Մարտ 8-ի ուժերը առանց յստակ պատճառներու պիտի բացակային նիստէն: Իսկապէս ալ ժամը 12.10-ին, հազիւ յիսուն հինգ երեսփոխաններ ներկայ կը գտնուէին խորհրդարանի ժողովարանին մէջ: Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի ստիպուած յետաձգեց նիստը, մեծամասնութիւն չզոյանալու պատճառով եւ երեքշաբթի, 2 Սեպտեմբերը ճշդեց նոր նախագահ ընտրելու թուական: Մուսթաֆայա Յոսանցի պետ Ֆուատ Սիւնիորա պահանջեց նոր նախագահ մը ընտրել երկրին, իսկ նախագահի ընտրութիւնը անհնար դառնալու պարագային՝ երկարաձգել խորհրդարանի պաշտօնավարութիւնը: Սիւնիորա նշեց, թէ նախագահի ընտրութիւնը պոյքոթի ենթարկող կողմը պիտի կրէ պատասխանատուութիւնը:

Վարչապետ Թամամ Սալամ յայտարարեց, որ Զարթոնկի եւ Թուրքիոյ հետ հարաբերութեան մէջ մտած է առեւտրական գիտութեան կարգաւորումը: Ընդհանուր անվտանգութեան ընդհանուր տնօրէն զօրավար Ապասա Իպրահիմ յայտնեց, թէ պատահող վերցուած գիտութեանները ազատ արձակելու միջոցառումները կը շարունակուին եւ անոնց ազատ արձակումը մտաւորաբար: Սակայն խորհրդարանի նախագահը մտավախութիւն յայտնեց, թէ անոնց հարցը դառնայ Ազգի առեւտրականներուն սենարիոյն կրկնութիւնը: Սալամ, վարչապետարանին մէջ ընդունեց Փաղանգաւոր Կուսակցութեան պետ Ամին Ճեմալը: Վերջինս յայտարարեց, թէ անհրաժեշտ է միւնչել Զոկտեմբեր ընտրել նոր նախագահ:

Ընկերավարական Յառաջդիմական Կուսակցութեան պետ Ուալիտ Ճոմպաթ յայտարարեց, որ Սաատ Հարիրիի ապացուցած էր, թէ կը քալէր իր հօր, նահատակ վարչապետ Ռաֆիք Հարիրիի ուղիով: Նշեց, թէ Սաատ Հարիրի կը շարունակէ իշխանութեան ներկայացուցիչներու հետ իր հանդիպումները: Ուալիտ Ճոմպաթի եւ Նեպիի Պըրրիի հետ հանդիպելէ ետք, Հարիրի յառաջիկայ ժամերուն պիտի այցելէ Ռապիէ: Սաատ Հարիրիի ապահովական կառոյցներէն ստացած է անոնց կարիքները ներկայացնող ցուցակ մը:

Լիբանանեան բանակի ընդհանուր հրամանատար զօրավար ժան Զահուաճի յայտարարեց, թէ Տաշ Երկրորդ Իրաքի մը պիտի վերածել Լիբանանը եւ միջամայնաբանի բախումներ պիտի հրահրուին սինիսներու եւ շիիներու միջեւ: Զահուաճի զգուշացուց՝ ծայրայեղականները սպառնալիք կը ներկայացնեն




Լիբանանին: Միւս կողմէ, լիբանանեան բանակին եւ ներքին ապահովութեան ուժերուն համար նախատեսուած երեք միլիար տոլարի օժանդակութիւնը կ'ուշանայ Ռիատի կողմէ երկու կարեւոր ընդգծումներու պատճառով. առաջինը՝ Ռիատ նախապայման կը դնէ, որ ոչ մէկ կողմ չաւաքածի պիտի չվերցնէ Ֆրանսայէն գնելիք սարքերէն, երկրորդ՝ բոլոր շահագրգիռ կողմերը յանձնառու պիտի մնան՝ ապագային երրորդ կողմի մը աւելի աճան սակով վաճառելու գնուած սարքերը: Այս երկու մտահոգութիւններուն լոյսին տակ, բանակին կատարուելիք օժանդակութիւնը կրնայ քանի մը օր եւս ուշանալ: Երեք միլիարն է բացի, Սեուտական Արաբիա, Սաատ Հարիրիի միջոցով մէկ միլիար տոլարի նոր գումար մը պիտի փոխանցէ Լիբանանի ապահովական կառոյցներուն: Լիբանանի մօտ Սեուտական Արաբիոյ դեսպան Ալի Աուատ Օսէյրիի հերքեց սեուտական նախապայմաններու գոյութեան մասին տեղեկութիւնները:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

- Կրթական նախարար Իլիաս Պուսասապ երէկ առաւօտեան հանդիպում մը ունեցաւ համակարգումի խորհուրդի ներկայացուցիչներուն հետ, ապա մամլոյ ասուլիս մը կնքեց: Պուսասապ յայտնեց, թէ պետական քննութիւններու մասնակցող ուսանողներուն վկայագիր յանձնելու որոշումը յետաձգած է Աստուածածնի տօնէն ետք:
- Ելակարգականութեան ընկերութեան սարակները երէկ առաւօտեան փակեցին նախարարութեան շէնքը տանող ճանապարհները եւ նստացոյց մը կատարեցին նախարարութեան շէնքին առջեւ: Սարակները կը պահանջեն, որ կառավարութիւնը աւելցնէ ընկերութեան մօտ արձանագրուած մնայուն պաշտօնեաներու թիւը:
- Երեսփոխան Սիբուա Ֆաթուշ ներկայացուց խորհրդարանին պաշտօնավարութեան ժամկետը երկու տարի եւ եօթ ամիս երկարաձգելու նախագիծ մը: Խորհրդարանական ազդիւններ կը յայտնեն, թէ Մարտ 14-ի ուժերը կը փափաքին միայն մէկ տարիով երկարաձգել ժամկետը:
- Լիբանանի համար ստեղծուած Միջազգային Ատենի խօսնակ Մարթին Եուսէֆ ներկայացուց իր հրաժարականը: Լրագրողներուն յղուած նամակի մը մէջ Եուսէֆ յայտնեց, թէ հրաժարականին պատճառները զուտ անձնական բնոյթ կը կրեն:
- Պաշտպանութեան նախարար Սամիր Մուշալէ ընդունեց Լիբանանի մօտ Արիտանիոյ դեսպան Թոմ Ֆլեչըրը: Վերջինս խոստացաւ յաւելնել օժանդակութիւններ յատկացնել լիբանանեան բանակին:

ՈՒՄԸԻՆԿԹԸՆ ՎՃՌԱԿԱՆ ԸԱՅԼ ԿԸ ՆԿԱՏԷ ԻՐԱՔԻ ՄԵՋ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Իրաքի ողբերգութիւնը եւ մարդկային աղետը անկարելի է անտեսել: Իրաքի արհեստագործ ծայրայեղականները տասնեակ հազարաւոր փոքրամասնութիւններ բռնագաղթի կ'ենթարկեն իրենց ծննդավայրէ: Անոնք՝ ծայրայեղականները, իրենց տիրապետութեան գօտիին մէջ գտնուող բնակչութիւնը դրած են երկընտրանքի առջեւ՝ կրօնափոխութիւն կամ բռնագաղթ: Բռնագաղթի ճանապարհին դիմող փոքրամասնութիւնները



Տիրապետող հատելով կ'ապաստանին Սուրիա: Գաղթականաց հարցերու պաշտպանութեան միջազգային կազմակերպութիւնը յայտարարեց, թէ աւելի քան 80 հազար եգիպտացի արկածաբար հեռացած են իրենց ծննդավայրէ: Փենթագոնի խօսնակ մը յայտնեց, թէ գոյութիւն չունի Իրաքի մէջ գիտութեան գործողութիւններուն ծիրը ընդլայնելու ծրագիր: Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Ճոն Զերրի յայտարարեց, որ Ռաշիդիլըն եւ Աստրախիա ՄԱԿ-ի Ապահովութեան Նիստին պիտի բարձրացնեն Իրաքի մէջ կռուող ստորահպատակ ճիւղախմբակներու հարցը: Ամերիկեան օդուժը չորրորդ անգամ ըլլալով արշաւեց Տաշի դիրքերուն վրայ: Արիտանիա յայտարարեց, թէ արշաւը շարունակուած է:

ԿԱԶՄՅԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՐԱՆ ԵՐԿԱՐԻԼ

Իրաքի վերականգնման անհրաժեշտ մը, որ մերժեց յայտնել իր ինքնութիւնը, լրագրողներուն յայտնեց, թէ Գահիրէի բանակցութիւնները ոչ մէկ յառաջընթաց արձանագրած են ցարդ:



Իրանի փոխարտաքին գործոց նախարար Հիւսէյն Ամիր Իյտ Ալիիան յայտնեց, թէ Թեհրան տակաւին Գահիրէի պատասխանը կը սպասէ, որպէսզի մարդասիրական օժանդակութիւն ուղարկէ Կազայի բնակիչներուն: Սեուտական Արաբիոյ արտաքին գործոց նախարար իշխան Սեուտ Ֆայսալ պահանջեց թիւովը կենալ Կազայի մէջ մնայուն գիտադարձ գոյացնելու Եգիպտոսի ջանքերուն: Այս առիթով, ան 500 միլիոն տոլարի օգնութիւն մը խոստացաւ Կազայի վերաշինութեան ծրագիրներուն: Ապահովական գետնի վրայ, իրաքիական եգերապահները խախտեցին երկօրեայ գիտադարձը եւ կրակ բացին Ռաֆահի ուղղութեամբ:

ՉԻՆԱԴԱԴԱՐԻ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԸ ՆՈՒԱԶԱԾ ԵՆ

«Անցած գիշեր եւ այսօր առաւօտեան, ազդեցիկներու կողմը կրկին խախտած է իրադարձարի պահպանման ռեժիմը հայ եւ ազդեցիկներու պետական սահմանագօտիի տարբեր հատուածներուն մէջ՝ կիրառելով հրաձգային, որոնց մէջ խոշոր տրամաչափի զինատեսակներ»: Սոյն յայտարարութիւնը կատարեց Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապերու վարչութիւնը՝ աւելցնելով, որ նախորդ օրերուն հետ բաղդատելով՝ զինադարձարի պահպանման դրութեան խախտումներու պարբերականութիւնը նուազած է:

Գետնի վրայ տեղի ունեցող իրադարձութիւններէն փոխանցուած տուեալներուն համաձայն՝ Օգոստոսին հայ-ազդեցիկներու պետական սահմանագօտիին մէջ հարպտեման կողմը գիտադարձարի դրութիւնը խախտած է 31 անգամ, տարբեր տրամաչափի հրաձգային զէնքերէ հայ սահմանապահներուն ուղղութեամբ արձակելով աւելի քան 600 կրակոց:

Հայկական կողմէ տուած տուեալները կ'ընդհանրեն 6 անգամ, հակառակորդին ուղղութեամբ արձակուած է 889 կրակոց:

Հայկական կողմէ տուած տուեալները կ'ընդհանրեն վերահսկել սահմանային իրավիճակը շփման գծի ամբողջ երկայնքով, խստօրէն հետեւում են իրադարձարի ռեժիմի պահպանման եւ իրավիճակին համաձայն գործողութիւններին եւ դիմում միայն՝ հակառակորդի կողմից արձանագրուող նպատակային խախտումներին դէպքում», նշուած է հարաբերութեան մէջ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ 12 Օգոստոս 2014

Ռամկավար Ազատական Կուսակցութեան Լիբանանի Երջանային Վարչութիւնն ուրախութեամբ կը շնորհակալուի նախկին վարչապետ Սաատ Հարիրիի վերադարձը Լիբանան: Ապահովական նկատառումներով երեք տարիներու իր ստիպողական բացակայութենէն ետք, Լիբանանի եւ շրջանի դիմագրուած քաղաքական ու ապահովական կացութեան այս ամենանոր օրերուն իր վերադարձը կը յատկանշէ չափաւորականութեան եւ տրամաբանութեան վերադարձը դէպի Լիբանան, ուր պատմութիւնը վկայ է, թէ չկայ լուծում առանց խելամիտ փոխհասկացողութեան եւ թէ չափաւորականութեան տկարացումը կը նշանակէ ծայրայեղականութեան արմատաւորում, որ ոչ միայն անառողջ վիճակ մըն է, այլ չափազանց վտանգաւոր եւ իր հետեւանքներով անսախազուշակելի:

Արեւի մէջ բոյն դրած ծայրայեղականներուն վրայ Լիբանանեան Բանակին տարած յաղթանակը, Հանրապետութեան Նորընտիր Մուքթէ Ապտէ Լաթիֆ Տըրեանի լայնամիտ, հանդուրժողական եւ իսկական իսլամութիւնը արտացոլացնող ճառը եւ այս բոլորը թագադրող նախկին վարչապետ Սաատ Հարիրիի վերադարձը լաւատեսութեան կը պարգեւեն մեզ ինչ կը վերաբերի Լիբանանի ապագային:

Բարի վերադարձ եւ ապահով կեցութիւն մեր սիրելի նախկին վարչապետ Սաատ Հարիրիին:

**ՈՒՄԸԻՆԿԱՆ ԱՇՏԱԿԱՆ ԿՈՍՏԱԿՑՈՒԹԵԱՆ
ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԸ Կ'ԱՐՁԱԳԱՆԳԷ ՍՈՉԻԻ ԵՌԱԿՈՐՄ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՆ

Սոչիի մէջ կայացած եռակողմ հանդիպումը կարեւոր նշանակութիւն ունի, որովհետեւ ան յաջողած է այնպիսի գաղափարներու, որոնք խիստ մտահոգիչ էին, ինչպէս նաեւ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահ երկիրներու համար: Այս մասին հարողեց «Artsakhpress»-ը:



Արցախի մէջ առանցքային կը համարուի այն հանգամանքը, որ հանրական ընթացքին, իբրեւ խնդիր լուծման միակ տարբերակ շեշտուած է բացառապէս խաղաղ ճանապարհը: «Մենք կ'արժեւորենք այս հանդիպումը, քանի որ զինադարձարի կնքումն ի վեր Ազդեցիկները երբեք այդքան կոպտօրէն չէր խախտած իրադարձարի ռեժիմը, որքան կատարեց վերջին շրջանին», «Արմէփրէս»-ի հետ զրոյցին ըսաւ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահի մամուլի խօսակի Դաւիթ Բաբայեան:

ԼՂԴ ղեկավարի խօսակցին կարծիքով, Սոչիի մէջ նախագահներու հանդիպման ամենակարեւոր ուղեւորը այն էր, որ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութիւնը պետք է կարգաւորուի խաղաղ ճանապարհով, որուն անհրաժեշտութիւնը շեշտուեցան նաեւ Ռուսիոյ կողմէ: «Եւ կարեւոր է, որ Ռուսաստանն ալ այդ կրկնեց ցոյց տալով, թէ շահագրգռուած է, որպէսզի հակամարտութիւնը խաղաղ լուծում ստանայ: Կարծեմ, թէ համանախագահող միւս երկիրներն ալ շահագրգռուած են, որպէսզի հակամարտութիւնը լուծուի խաղաղ ճանապարհով», նշեց Բաբայեան:

«Բնական է, որ այդ խաղաղ կարգաւորումը պիտի ըլլայ փոխզինումային: Սակայն սա պետք է ըլլայ ոչ միանշանակ գիշումներ, ինչը մնայուն կը պահանջէ Ազդեցիկները: Բնական է, որ այս ամենը թոյլ կու տայ ակնկալել, որ գործընթացը կը շարունակուի», ըսաւ ԼՂԴ նախագահի մամուլի խօսակը:

ՑԵՐԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՊՈՒՆԵՍԵԹԱԿԻ ՆԱԽԱԳԱՐՅԻՆ ԵԼՈՅԹԸ ԱՆՅԱՆԱԳՏԱԳՈՒՅԱԾ Է ԱՆԿԱՐԱՆ

«Համաշխարհային Առաջին Պատերազմի 100ամեակը» խորագիրով ձեռնարկին ընթացքին արտասանուած Գերմանիոյ Պոլստեպեակի (խորհրդարանի) նախագահ Նորաբեթ Լամերթի ելոյթը անհանգստացուցած է Անգարան:

Թուրքիոյ խորհրդարանի նախագահ Ճեմիլ Չիչեք այդ կապակցութեամբ յատուկ նամակ մը յղած է Լամերթին՝ իր մտահոգութիւնը յայտնելով վերջինիս խօսքերուն առնչութեամբ: Ըստ թրքական «Հապերթը» կայքին՝ Չիչեք քննադատած է յատկապէս Պոլստեպեակի նախագահի հետեւեալ յայտարարութիւնը. «Հայերու քարտին ու ոչնչացումը, անոնց տղախուրդներն ու զանգուածային սպանութիւնները վերանորոգած են պատերազմական գործիքը»:

Իր նամակին մէջ Չիչեք կրկնած է, թէ «հայերուն տղախուրդները պատերազմական պայմաններու հետեւանքով եղած է, եւ այդ պատճառով ալ զայն կարելի չէ քարտ կամ զանգուածային սպանութիւն կապել»՝ աւելցնելով, որ պատերազմը «թէ՛ հայերու, թէ՛ ուրբերու համար մեծ ցաւերու ժամանակաշրջան մը եղած է»:

Անդրադառնալով Լամերթի խօսքերուն՝ Չիչեք կոչ օրած է Գերմանիոյ «անկողմնակալ վերաբերման ցուցաբերելու», եւ փափաք յատուած է այս հարցին մասնագրուող նպատակային ընթացքներու իրենց յաջորդ հանդիպման ընթացքին:



ԴՊՐԵՎԱՆԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ԴՊՐԵՎԱՆՔԻ 85-ՐԴ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

ՆՈՐ ՍԱՆԵՐՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի 2014-2015 կրթական տարեշրջանի նոր սաներու արձանագրութիւնը արդէն սկսած է:

Դպրեվանք կ'ընդունուին նախակրթարանի 6-րդ դասարանը աւարտած աշակերտներ, կամ աւելի բարձր դասարաններէ դիմում կատարող թեկնածուներ:

Անոնք որոնք կը փափաքին Դպրեվանքի ուսանող դառնալ, թող բարեհաճին կապուիլ Դպրեվանքի հսկիչներուն՝ Շնորհք Աբղ. Աշըգեանին 71/723264 կամ Գարեգին Աբղ. Շիրազեանին 76/175127:

ՏԵՏՉՈՒԹԻՆ ԴՊՐԵՎԱՆՈՑ

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈՒՍՄԱՆ ՏՕՆ ԵՒ ԽԱՂՈՂԻ ՕՐՃՆՈՒԹԻՒՆ

Ֆէյթրոնի «ՍԱԹԵԼԻԹ» ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՐ ԺՐԺՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՋ

Ուրախութեամբ կը յայտնենք մեր եկեղեցւոյ ծխական ժողովուրդին եւ մանաւանդ այն հաւատացեալներուն որոնք բարձրացած եւ Ֆարայայի, Հարաժեյի, Ֆէյթրոնի, Աշըգեյի եւ Զըսրուանի շրջակայից հովիւները. թէ Կիրակի 17 Օգոստոս 2014-ին Ս. Աստուածածնի Վերափոխման տօնին առիթով Սուրբ Պատարագ պիտի մատուցուի, ապա խաղողօրինեցի արարողութիւն պիտի կատարուի:

Արարողութեան պիտի հովանաւորէ եւ քարոզէ՝

ԳԵՐԱՇՆՈՐՀ ՏԵՐ

ՇԱՀԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓԱՆՈՍԵԱՆ

Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի

Սկիզբի Ս. Պատարագի կէսօրուան ժամը 12:15
Քարոզ ժամը 1:00
Խաղողօրինեց ժամը 1:30

Կոչ կ'ուղղենք մեր հաւատացեալ ժողովուրդին ներկայ գտնուելու հոգեպարար Սուրբ Պատարագին եւ հաղորդուելու օրուան Սուրբ խորհուրդով:

ՏԱՆՕԹ

Անոնք որոնք կը փափաքին ըստ աւանդութեան խաղող ընծայաբերել, թող բարեհաճին մինչեւ ժամը 1:00 յանձնել խաղողները եկեղեցւոյ դրան մօտ հիւրընկալող տիկնանց յանձնախումբին եւ կամ թաղական խորհուրդի անդամներուն, իսկ Սաթելիթ համալիրի մէջ բնակիչներուն համար դիմել Պրն. Կարօ Բաղդեմեանին, հեռ 09/888400 ներքին թիւ 3776, կամ 03/620167:

Իսկ անոնք որոնք փափաքը ունին իրենց սիրեցեալ ննջեցեալներուն համար Տեր Ողորմիա խնդրել, պարտին մինչեւ ժամը 11:30 ներկայ գտնուիլ եկեղեցի եւ արձանագրել ննջեցեալներուն անունները:

Թաղական Խորհուրդ
Ընկերի, Անթիլիասի, Չալքայի եւ շրջակայից
Ս. Յարութիւն Եկեղեցւոյ

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈՒՍՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՇԱՐՔ ՊԻՔՖԱՅԱՅԻ ՄԱՏՐԱՆ ՄԵՋ

Կաթողիկոսարանի Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի կազմակերպութեամբ, 11-15 Օգոստոս 2014-ին, ամէն առաւօտ ժամը 10-ին, Պիքֆայայի Ս. Աստուածածնի մատրան մէջ տեղի պիտի ունենայ հոգեւոր խորհրդածութեան պահ (քարոզախօսութիւն, շարականի երգեցողութիւն եւ սաղմոսերգութիւն), Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով:

Կը հրաւիրենք մեր ժողովուրդի զաւակները մասնակից դառնալու խորհրդածական պահերուն, եւ վերանորոգուելու հոգեւոր արժեքներով ու ապրումներով:

ԱՍՏՈՒԱԾԱՍՕՐ ԿԵԱՆԸՐ ՕՐԻՆԱԿ ՀԱՅ ՄՕՐ ԿԵՆՑԱՂԻՆ

Երկուշաբթի 11 Օգոստոս «ՅԻՍՈՒՄԻ ԾՆՈՒՄՆԸ, ՏԱԾԱՐ ԸՆԾԱՅՈՒՄԸ ԵՒ ԱՒԱՆԴՊԱՅ ԸՆՏԱՆԻԸ»
Հոգ. Ս. Կիզեկ Աբղ. Տալլըճեան

Երեքշաբթի 12 Օգոստոս «ՅԻՍՈՒՄԻ ԾՆՈՒՄՆԸ, ՏԱԾԱՐ ԸՆԾԱՅՈՒՄԸ ԵՒ ԱՒԱՆԴՊԱՅ ԸՆՏԱՆԻԸ»
Հոգ. Ս. Վահրիճ Աբղ. Ղարախանեան

Չորեքշաբթի 13 Օգոստոս «ՅԻՍՈՒՄԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԿԱՆԱՏ ԽՈՒՄԵՐ ԱՌԱՋՆՈՐԴ»
Հոգ. Ս. Վաչէ Աբղ. Պալլըճեան

Հինգշաբթի 14 Օգոստոս «ՅԻՍՈՒՄԻ ԶԱՐԶԱՐԱՆՔՆԵՐՈՒՄ, ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ, ԹԱՐՄԱՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԿԵՆՐԱՆԻ ՎԿԱՆ»
Հոգ. Ս. Պարոյր Աբղ. Շերնեզեան

Ուրբաթ 15 Օգոստոս «ՅԻՍՈՒՄԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԵՏԸ ՄԻՆՉԵՒ ՄԱՅ ԻՐ ՈՐԴԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՏԱՐԻՍ ՀՅԵՏԻՈՐԸ»
Հոգ. Ս. Նշան Աբղ. Լախոյեան

Կ Ա Ր Ե Ւ Ո Ր

Անոնք որոնք կը փափաքին մատաղցու ոչխար կամ խաղող նուիրել Ուխտի Օրուան առիթով, պետք է ամէնէն ուշը Ուրբաթ, 15 Օգոստոս 2014-ի կէսօրին, իրենց նուիրելը յանձնեն Անթիլիասի կամ Պիքֆայայի Վանքը:
Հեռ: Անթիլիաս 04-410001 – Պիքֆայա 04-983634:

Դասախօսական ձեռնարկներուն մասնակցիլ փափաքողներուն համար, փոխադրակառքեր տրամադրուած պիտի ըլլան ամէն առաւօտ ժամը 8.45-ին, Պուրճ Համուտի Ս. Աստուածածնի եւ Սրբոց Վարդանանց եկեղեցիներու մուտքին, Տպարան Տօնիկեանի մօտ, Տորայի մայրուղիին վրայ գտնուող «Խուրի Հոմ Լայն» հաստատութեան մօտ եւ Անթիլիասի Մայրավանքին դիմաց:

Շաբաթ, 16 Օգոստոս 2014-ի Ուխտի Օրուան պատարագին համար, դէպի Պիքֆայա մեր ժողովուրդի զաւակներուն երթելու դիրացնելու նպատակով, մասնաւոր փոխադրակառքեր տրամադրելի պիտի ըլլան հետեւեալ վայրերուն մէջ.-

- Ս. Վարդանանց եկեղեցւոյ դիմաց
- Ս. Աստուածածնի եկեղեցւոյ դիմաց
- Ս. Յովիաննու Կարապետ եկեղեցւոյ դիմաց
- Ս. Յակոբ եկեղեցւոյ դիմաց
- Ֆանար՝ ակումբին առջեւ
- Ռաուտա (Էլիան)
- Ս. Սարգիս եկեղեցւոյ կից
- Չալքա ակումբին կից
- Անթիլիաս՝ Սիմիթեան շէնքեր
- Ս. Բառասնից Մանկանց եկեղեցի
- Հաճըն եւ Ռմէյլ՝ Նախկին Փուռ Փատովային կից

Փոխադրակառքերը վերոնշեալ վայրերէն պիտի մեկնին երեկոյան ճիշդ ժամը 6:00-ին եւ Ս. Պատարագի աւարտէն կէս ժամ ետք՝ ժողովուրդը վերադարձնեն Պէյրութ:

ՈՒՄՏԻ ՕՐ ՊԻՔՖԱՅԱՅԻ ԵՒ ՏՕՆ ՎԵՐԱՓՈՒՍՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Տարիներու աւանդութեան համաձայն, այս տարի եւս հանդիսաւոր շուքով պիտի նշուի Ս. Աստուածածնի Վերափոխման տօնը եւ կատարուի Պիքֆայայի Ս. Աստուածածնի վանքին ուխտագնացութիւնը:

Այս առիթով, ուխտաւոր հաւատացեալներուն կը ներկայացնենք Ուխտի Օրուան ժամանակացոյցը.-

Ուրբաթ 15 Օգոստոս

- * Աղի օրինութիւն եւ ոչխարներու զենում, առաւօտեան ժամը 11.00-ին:
- * Աջահամբոյր, առաւօտեան ժամը 11.30-12.00:
- * Երեկոյեան ժամերգութիւն, կ.ե. ժամը 5.00-ին:
- * Հսկում, երեկոյեան ժամը 7.00-ին:
- * Աջահամբոյր, երեկոյեան ժամը 8.00-8.30:
- * Երգահանդէս, երեկոյեան ժամը 8.30-ին:

Շաբաթ 16 Օգոստոս

- * Առաւօտեան ժամերգութիւն, առաւօտեան ժամը 7.00-ին:
- * Երեկոյեան ժամերգութիւն, կ.ե. ժամը 5.00-ին:
- * Հանդիսաւոր Ս. եւ Ամմահ Պատարագ, երեկոյեան ժամը 8.00-ին:

Պիտի պատարագէ՝

ԳԵՐՇ. Տ. ՇԱՀԷ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

Արարողութեանց պիտի նախագահէ եւ ժողովուրդին իր Հայրապետական պատգամը փոխանցէ՝

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Յընթաց Սուրբ եւ Ամմահ Պատարագին, տեղի պիտի ունենայ խաղողի եւ մատաղի օրինութիւն:

Այս առիթով Վեհափառ Հայրապետը օծումը պիտի կատարէ նորակառոյց Նահատակաց Խորանին

Կիրակի 17 Օգոստոս

Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ հանդիսաւոր Ս. եւ Ամմահ Պատարագ:

Պիտի պատարագէ եւ քարոզէ՝

ԳԵՐՊ. Տ. ԺԻՐԱՅՐ Ծ. ՎՐԴ. ԹԱՇՃԵԱՆ

Յաւարտ Ս. եւ Ամմահ Պատարագի տեղի պիտի ունենայ խաղողօրինեցի արարողութիւն:

Երկուշաբթի 18 Օգոստոս «Յիշատակ Մեռելոց»

Պիքֆայայի Ս. Աստուածածնի մատրան մէջ տեղի պիտի ունենայ Ս. եւ Ամմահ Պատարագ ու հոգեհանգիստ ազգիս համօրէն ննջեցելոց հոգիներուն ի հանգիստ:

ԱՅՍՕՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵՋ 13 ՕԳՈՍՏՈՍ

- * 1173՝ վախճանեցաւ Ներսէս Շնորհալիւն, հայ եկեղեցական գործիչ, Ամենայն Հայոց Կաթողիկոս (ծնեալ՝ 1102):
- * 1826՝ մահացաւ անաթոմիական դրութեան հիմնադիր Ռենէ Լայէնէքը (ծնեալ՝ 1781):
- * 1926՝ ծնաւ գուպացի լեղափոխական Ֆիտլէ Գասթրոն:
- * 1943՝ ծնաւ հայ դերասան Ազատ Գասպարեանը (մահացաւ՝ 2013):
- * 1987՝ ծնաւ թենիսիստուհի Մարիա Շարափովան:

«ԿԱՐՕ-ՏԻԳՐԱՆ» ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

GARO - DIKRAN Flowers & Funeral Services



Յուղարկաւորութեան եւ ամէն առիթներու լաւագոյն սպասարկութիւն

Հասցէ: Պուրճ Համուտ, Ս. Աստուածածնի եկեղեցւոյ փողոց:
Հեռ. 01-254528, 03-892896
e-mail: garogarabedian@hotmail.com

POLO TRAVEL Travel & Tourism
MIA To ARMENIA YEREVAN Effective 30 June 2014
Starting USD 350 *taxes excluded
EVERY MONDAY WEDNESDAY & FRIDAY
Bourdj Hammoud - Tripoly Str. - Harboyan Trade Center - Ground Flr.
Tel/fax: +961-1-253852 / +961-1-254452
Mobile: +961-3-148248 / +961-3-881944
E-mail: info@polo-travel.com
www.polo-travel.com

AMBASSADE ARMÉNIENNE AU LIBAN
PRELATURE ARMÉNIENNE DU LIBAN
مطاربيّة الأرمنيّة في لبنان
ARMENIAN PRELACY OF LEBANON

ՊԱՇՏՕՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

Լիբանանի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանը կարիքը ունի վարչական պատասխանատուի մը, որ կ'ամբողջացնէ հետեւեալ պայմանները.-

- ա- Ունի համակարգչային գիտելիքներու հմտութիւն:
 - բ- Ունի 10 տարիներու վարչական աշխատանքային փորձառութիւն:
 - գ- Կը տիրապետէ հայերէն, արաբերէն եւ անգլերէն լեզուներուն:
 - դ- Օժտուած է յարաբերական կարողականութեամբ եւ մասնակից մեր համայնքի կեանքին:
 - ե- Ունի համակարգչային գիտելիքներու հմտութիւն:
- Դիմումագրերը պետք է ներկայացուին Պուրճ Համուտի Ազգային Առաջնորդարան:

ԴԻՄԱՆ ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ